

ՔԱՆԱԿԱՆ ԵՐԱՐԻՆԻ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարեկան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խաղաղաստան մէջ:

Մեր հասցեն. ТИФЛИСЬ, Редакция „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տոն օրերից)

Ցայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Ցայտարարութիւնների համար վճարում են
խաղաղաստան ըստ 2 կոպէկի.
Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՆԵՐԿԱՅ 1898 ԹԻՒ

ՄՇԱԿ ԴՐԱՎԱՆՆԵՐՆԵՐ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱՐՈՒ

Մշակի տարեկան գինը թէ՛ Ռուսաստանում և թէ՛ արտասահմանում 10 ռուբլի է, տասն և մէկ և տասն ամսականը՝ 9 ռ., ինն և ութ ամսականը՝ 8 ռ., եօթ ամսականը՝ 7 ռ., վեց ամսականը՝ 6 ռ., հինգ ամսականը՝ 5 ռ., չորս ամսականը՝ 4 ռ., երեք ամսականը՝ 3 ռ., երկու ամսականը՝ 2 ռ., մի ամսականը՝ 1 ռուբլի:

Թիֆլիսում գրվում են խմբագրատան (Բաղարայան և Բարսեղյան փողոց, անկիւն):
Ուրիշ քաղաքներից պէտք է գիտնէ այս հասցեն. ТИФЛИСЬ, редакция „Мшакъ“, իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du Journal arménien „Mschak“.

Ցայտարարութիւններ ընդունվում են թէ՛ հայերէն, թէ՛ ռուսերէն և թէ՛ օտար լեզուներով:

ԲՈՎԱՆԱԿՈՒԹԻՒՆ

Մարդկայնութեան ոգին.—Ներքին ՏԵՍՈՒ-
թիւն. Գիշ էլ իրականութիւն. Բժականորութիւն-
նր օրինականութիւնն է. Նամակ Գիշերային-
նա-մակ Խմբագրութեան. Նամակ Խմբագրութեան.
Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒ-
թիւն. Նամակ Ամերիկայից. Արտաքին լու-
րեր.—ՅԱՅՏԱՐԱՐ ՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱԿԱՆ
ՄՇԱԿ. Նամակ Թիֆլիսից:

ՄԱՐԿԱՅԵՆՈՒԹԵԱՆ ՈՂԻՆ

Բոլոր ազգերի մամուլը այս րօպէին խօս-
տում է Բիսմարկի մասին: Ի՞նչ ասել կու-
զի, որ ամենքն են հիացած պետական
այդ մեծ մարդու վրա. նոյն իսկ Փրանս-
սիան, այն երկիրը, որ ամենից շատ է վը-
նասվել երկաթի կայանքի ծանր բռնուց-
ից, որ երբեք չի մոռանայ 1870—1871
թվականների սարսափները, այսօր խոստո-
ւանում է, որ զերեքամյա է մոտում մի
խոշոր, հանձարեղ գործի: Գերմանական
և աւստրիական լրագրիւնները ներքաշնի
մի ամբողջ կոյտ են ներկայացնում: Բիս-
մարկ համաժողովում է նապօթէն մեծի,
Ալեքսանդր Մակեդոնացու և այլ հռչակա-
ւոր մարդկանց հետ: Դա մասամբ հասկա-
նալի է. Բիսմարկ՝ իբրեւ ներկայացուցիչ
ոյժի, երկաթի և արեան պաշտամունքի,
զուգէ շատ բանով նման է պատմութեան
մէջ համաշխարհային անուն հանած գո-

րապետներին: Տասնիններորդ դարի մէջ
նա իր խելիքի, իր տաղանդի շնորհիւ կա-
րողացաւ հաշտեցնել առաջագիծող մարդ-
կութիւնը միջնադարեան գաղափարների
հետ, պատերազմը, զորքը դարձրեց ի-
դէպ եւրոպական ազգերի համար և իբրեւ
մի զրահապատ հսկայ գնաց մտքի ազա-
տութեան դէմ՝ ոտնակոխ տնելով արդա-
րութիւնը, ազնուութիւնը և այլ այդպիսի
յատկութիւններ, որոնք մարդկային հա-
սարկութեան բարոյական հիմունքներն
են կապմունք իբրեւ պատերազմող, իբրեւ
ամեն ինչ շարժող ոյժի ներկայացուցիչ նա,
ի հարկէ, նոյնքան իրաւունք ունի հիա-
ցում առաջացնելու ժամանակակիցների
մէջ, ինչպէս ամեն մի նշանաւոր, փառա-
ւոր մեծ գործարար, աշխարհակալ: Այդ
կողմից երկաթի կայանքի կողմնակիցների
և թշնամիների մէջ կարծիքների մեծ տար-
բերութիւնն է կարող լինել:

Բայց բաւական է այդքանը մի պետա-
կան մարդուն անմահացնելու համար:
Կարգալով բազմաթիւ լրագրիւնների դատո-
ղութիւնները, մենք կանգ ենք առնում մի
նշանաւոր հանգամանքի առաջ: Շատերը
իրանց յարգանքը մատուցանելուց յետոյ,
զնոմ են համաձայնութիւն Բիսմարկի և
մեր դարի մի ուրիշ մեծ գործիչի մէջ:
Դա Կլաւստին է, որի մահը մի բանի
ժամանակ այնպիսի անկողնութեամբ ու-

րում էր ամբողջ քաղաքակիրթ աշխարհը:
Եւ ի՞նչ է դուրս գալիս այդ համեմատու-
թիւնից: Չը նայած Բիսմարկի հսկայական
գործերին, չը նայած այն հանգամանքին,
որ նրա ջանքերով միացած Գերմանիան
դեռ նրա կենդանութեան ժամանակ էր
արձաններ դնում նրա յիշատակին՝ իբրեւ
ազգային երախտագիտութեան նշան, չը
նայած որ տասնեակ տարիների ընթաց-
քում այդ հսկան իր երկաթէ ձեռքի մէջ էր
պահում եւրոպայի բախտը, հրամայում էր
ամենքին, չը նայած, ասում ենք, այդ բո-
լորին, նա այնպիսի անկեղծ յարգանքի
զգացմունք էլ յարուցանում մտածողների
մէջ, ինչպէս մեծ անգլիացին, որի գործե-
րն մէջ թագաւորում էր մարդասի-
րութիւնը, ԼՈՅՍԻ և ազատութեան
հզօր սկզբունքները: Եւ ոչ ոք չէ կարո-
ւանում ասել, որ Բիսմարկ իր հսկայական
անդողութիւններով կարող է մասնակից լի-
նել այն փառքին, որ Հովարդէի ծերուն-
ու սեփականութիւնն է դարձել: Բիս-
մարկ ասում էր՝ «ոյժը իրաւունք է» և
այդ սկզբունքը փառաւոր յայտնաբե-
րով էր հաստատում: Կլաւստին ասում էր՝
«արդարութիւնը ամենից առաջ» և այդ
գաղափարի համար նա երկար կռիւց,
կորցրեց շատ բան, զինեց իր դէմ այնպի-
սի հանգամանքներ, որոնք թոյլ չը տուին
նրան իրագործել իր ամենամեծ գործերից
մէկը: Եւ ահա՛ նրան է մարդկութիւնը
պատկում փառքի դափնիներով:

Կայ աւելի միջնադարական, աւելի ո-
գեւորել երկոյթ: Աշխարհի բոլոր կողմե-
րում միաբերան է վերացում են, որ կոպիտ
ոյժը՝ ո՞րքան էլ զիջուցիչ փայլեր ունե-
նայ, ո՞րքան էլ երջանկացնէ այս կամ այն
ազգութիւնը, բայց մարդկութեան բարե-
րաւր է: Աշխարհը զօրապետների առաջ-
նորդութեան է կարօտ, նա չէ ուզում,
որ զինված բռնուցքը սրբութիւն դառնայ.
Նրա ցանկացածը մարդկայինութեան
ողբն է: Եւ ով այս մեծ գաղափարի հե-
րոս է հանդիսանում, նա՛ է՝ թէ՛ ներկայի
և թէ՛ ապագայի փառքը, նրան կարող է
մեծարել մարդը:

ան պատճառ՝ թէ և քիչ մը ուշ. ոչ ապաքէն
Ալեքսանդր Մակեդոնացու ընտրութեան ընկալումն ալ, իր
օրով, այս տեսակ phase-երէն անցաւ:

Բայց—այլ առակ լուարուք—Դուք զարմոյ
կերպով բանակցութեան մէջ է այժմ Մեքլիսե-
դէկ եպիսկոպոսի հետ՝ որ պատրաստուած է
ընդունել Սիւրի կաթողիկոսութիւնն, այն պայ-
մանաւ սակայն՝ որ Կ. Պօլսոյ Արքային կենտրո-
նական վարչութիւնը ընաւ չի միջամտէ Կիլի-
կեան գործերուն: Այս Մեքլիսեդէկը, բարձրաս-
տիման սոյն եկեղեցականին՝ հովուական աս-
տուածաբանութեան սոյն կարծեցեալ հե-
ղինակն, որ եկեղեցւոյ հովիւներուն պարտքը
կուսուցանել, որ լուի մեջիկ, անկիւն մը քաշ-
ւած, ան, սրտէն արիւն կանցնէր... ազգին այս
տխուր վիճակը տեսնելով, ան՝ որ չէր ընդու-
նէր ոչ և է ազգային պաշտօն՝ այն օրէն՝ յո-
րում Արարատայ բարձունքէն զորեցաւ Գը-
ղըլ-Թօփրաքի մէջ, որ Խլիլիւն սրբազանի
օրով՝ հակառակ բուռն բաղձանաց Կիլիկիոյ ժո-
ղովրդեան, հրաժարեցաւ Կիլիկիոյ կաթողիկո-
սութեան քանդիկայութիւնէ՝ և կեան հեռագիր-
ներուն մեքլիսեդէկ պատասխանեց, այս պա-
տուակաւաց պատուակաւ սրբազա-
նը, կըսեմք, այսօր ելեր, խորհրդակցութեան
մտեր է պալատին հետ և կընդունի այն կա-
թողիկոսութիւնն՝ որ մեքլիսեդէկ անարգութեամբ
իրմէ... Մեքլիսեդէկ Գրան դորձակցութեամբ
ընդունելով այդ կաթողիկոսութիւնը, մեծ եր-
կիւղ կայ՝ որ պայքար մը յարուցանէ Ելմիսի-
նայ և Սիւրի միջև, վասն զի՝ թէ լաւ տրամա-
դրութիւններ չունի Ելմիսիայ կաթողիկոսա-
կան Աթոռոյն նկատմամբ և թէ ինքն՝ անձնա-

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԻՉ ԵՒ ԻՐԱՎԱՆՈՒԹԻՒՆ

I
Լաւ չի լինի արդեօք, որ մենք շուտ շուտ ին-
չէնք վերացական դատողութիւնների, վարդա-
պետութիւնների, սոցիալների աշխարհից և աշ-
խատէից ողբան կարելի է մեծ ուշադրութեամբ
նայել մեր իրականութեան հաստատ յնարա-
նից, հողից կտրված ամեն դատողութիւն, լինի
դա նոյն իսկ բուրբոն անվիճելի իբրեւ թէս-
րիա, իբրեւ հաւանականութիւն, միշտ եղել է և
կը մնայ մանկական թովովանք: Եթէ մեզ ոգե-
ւորող ինչպիսիք կենսիկ համար են և ոչ թէ
երկակայութեան մտնող տալու համար են և ոչ թէ
է, ուրեմն, որ անողորմ իրականութիւնը երբեք
չը հեռանայ մեր աչքի առաջից, չը դառնայ
կողմնակի, անշահան հանդամանք: Նրան պիտի
զիմենք, նրանից պիտի դասեր վերցնենք:

Արդ՝ ինչ է ասում մեզ այդ իրականութիւնը:
Շատ անգամ ենք առիթ ունեցել մատնացոյց
անելու այն ողորմելի, անօգնական դրութիւնը,
որին մատնում է ժողովրդի մասսան մեր
լայնարձակ դատաւերում: Փառաւական թղթակ-
ցութիւնների մէջ կան ամբողջ պարբերութիւն-
ներ, տողեր, երբեմն նոյն իսկ առանձին շեշտեր,
որոնք մի-մի դրամա են ներկայացնում, եթէ
միայն ուշադիր, մտածող մարդիկ շատ լինեն,
եթէ մասսայի խորքից եկող իւրաքանչիւր խօս-
քը ունենայ այն նշանակութիւնը, որին նա ար-
ժանի է ամեն կողմով: Սրբ մեր առաջ կանգ-
նում է ժողովուրդը իր անթիւ ցանկով, իր
հաղթանակ նախապաշարժներով և անաղին
տգիտութեամբ, մենք ախառում ենք՝ տխուր
իրականութեան հետ մի կերպ հաշտվելու հա-
մար, հեռացնել այդ մասսան, դնել նրան մեր
երկրի ամենախոյտ անկիւններում, ուր աշխար-
հադրական հանգամանքները մեզ ապահովացնում
են թէ լոյսը, դիտութիւնը ներս մտնելու ճանա-
պարհ չունենա: Մենք հաստատ համոզված, որ
դժուար հանգամանքները դէմ կուզենա համար
շատ պատրաստութիւն, շատ անվիճելիութիւն է
հարկաւոր, սպասում ենք թէ երբ կը գայ այն
ժամանակը, երբ մտաւոր մեծագործութիւնների
ընդունակ մի սերունդ առաջ կը գայ, որը գա-
ղափարի համար յայնձն կանգնէ ամեն մի զրկանք
ու տանջանք և դիտութեան լոյս կը տանէ մեր
ընտանիք խորշերը, մեր վաղուց մոռացված գա-

պէս լարուած է ներկայ Հայրապետին դէմ ինչ
ինչ պատճառներով... Ահա այս է հայ եկեղե-
ցականութեան բարոյական, հազար ավտոս...
Եւ ինչու Օրմանեան երեւ կարգալոյծ կը հրա-
տարակէ կարմիր մօրուս Կիրակոս անուն վար-
դապետ մը, անբարոյականութեան համար...
Բայց քանի տեսնել է անբարոյականութիւնն,
անբարոյականութիւնն ինչ բանի կըսեն... Իր
աստուածաբանութիւնն՝ որուն հետ և Մեք-
լիսեդէկի եպիսկոպոսութիւնն՝ ինչպէս կը բա-
ցատրեն անբարոյականութիւն... Եպիսկոպոս-
ներն ինչ ալ ըսեն, եպիսկոպոս են, բայց վար-
դապետները, բանասերներ... ոչ... պէտք է
պատժուին... Բայց եպիսկոպոսներն ինչեք են
մէջ տեղ՝ ազգի և եկեղեցւոյ իրաւասութիւն-
ներն ոտնակոխ կընեն, հոգ չէ, եպիսկոպոս են...
Եւ իրաւունք չունեն միմէ մեր վարդապետներն
ալ՝ որ կուզեն ժամ յառաջ եմփոփորոն իրենց
ուսին փաթկելու... Բայց Օրմանեան անոնց
գործն ալ խիստ տարտամ վիճակի մէջ թողուց:
Նորքնայ եպիսկոպոսները տակաւին կը
սպասեն. Վեհափառ Կաթողիկոսը գրած է եղեր
պատրիարքին՝ որ այնքան ժամանակ լրիկ դա-
նոնք Ելմիսիին: Լաւնուս նայելով, ուսուական
դեպատաւանութիւնը պատրաստ է եղեր անոնց ան-
ցաղիւր visé ընելու, բայց կառավարութիւնն
անցաղիւր չի տար և սուլմանին իրազէին յանձ-
նած է, նոր օրինակ բան մը՝ որ առաջին ան-
գամ յերան կուգայ և Օրմանեան աղօր դէմ
իսկ բողոքելու անկարող է...

Արաքական պատմագրութիւնն առաջ կեր-
թայ: Ապստամբները գերի բռնած են հաղթա-

առական անկմանը: Եւ մենք հանգիստ ենք մինչև այդ երանելի ժամանակը:

Բայց ինչ կասէք, երբ յաճախ երևան են գալիս խոշոր փաստեր, որոնք ցոյց են տալիս, թէ ամենին չը պէտք է հեռացնել կարօտ, անօդահան մասսան խոշոր կենտրոններէն ու մեծ ճանապարհներէն հեռու վայրեր: Ի՞նչ կասէք, երբ ձեզ հաւատացնում են որ մեր երկրում անտեղութիւնը, թշուառութիւնը կապված չեն տեղի դիրքի անմատչելիութեան, հեռաւորութեան հետ: Ի՞նչ կասէք, երբ ձեզ ցոյց են տալիս, որ դեղեր, Վազախի լեռներում կորած մի գիւղ և Շուշու պէս մի քաղաք տառապում են մի և նոյն ցաւից: Բաւական է կարող այն նամակները, որոնք նկարագրում են այդ բազմամարդ քաղաքի ներկայ դրութիւնը—և դուք կը համոզվէք, որ թէ մտապիւծ մի գիւղում, թէ մի մեծ քաղաքում մարդկային հասարակութիւնը դո՛ւք է անօդահանութեան, բանի որ նա զբաղւում է մի և նոյն հանգամանքների մէջ: Մի քաղաքը, որին չնորհված է ինքնավարութիւն, որ ունի ինտելիգենցիա, հարուստ դասակարգ, այսօր այնպիսի մտաւոր թշուառութեան է բառնված, որ չէ կարողանում մի բարեբարի բերած ջուրը բաժանել թաղերում, փողը ի շատէ կարգի բերել իր միակ զօսալսայքը, մտածել առողջապահական ամենաանոթաբան, տարբարական պահանջների մասին: Ի՞նչ ենք ասում: Փանդել մի փողոցի սալաշատակը և չը կարողանալ նորից սալաշատակը և ստիպված լինել ամբողջով խրվել ցիւրի մէջ, այն էլ մի այնպիսի տեղում, ուր օրվայ մեծ մասը անց է կացնում ապահովված դասը—որանից աւել ի՞նչ կարող է լինել: Խաւարի և ցիւրի մէջ խրված, կեղտոտ Շուշին տանտնակ տարիների ընթացքում չը կարողացաւ մի քիչ բարեկարգվել, մի քիչ մաքրվել: Իսկ երբ նրան տուին ինքնավարութիւն, երբ ազգաբնակչութիւնը կանչվեց իր լաւութեան ու բարեկեցութեան համար մտածել, յայտնի դարձաւ որ մարդ չը կայ, որ 30 հազար ժողովրդի մէջ գոյութիւն չունի չինարար օգի, ինքն աշխատանքի, զոհողութիւնների և յատու աշխատանքի ընդունակ ինքնաճանաչութիւն: Մեզ յայտնի է քաղաքագլխի ընտրութեան պատմութիւնը: Զը գտնելով մի ընդունակ, աշխոյժ, աշխատող մարդ, չուշեցիները պատգամաւորութիւն ուղարկեցին Ռիֆլիս մի պաշտօնակա օֆիցերի հրաւիրելու, որը կարող է լինել շատ ազնիւ, բարի մարդ, բայց կատարելապէս անկարող է մի բան անել: Եւ այժմ հաղորդում են որ Շուշու նոր քաղաքագլխի ինքն է ամեն տեղ ասում, թէ ոչինչ չէ կարող անել, թէ իր գործը չէ այդ պաշտօնը, որ փախավել են իր վրիճ... Սրեակայում էք աւելի օղբերգական դրութիւն: Քաղաքացիները պիտի տանգվեն քաղաքի քարտեզագր, անտանելի դրութիւնից, ամբողջ տարին ցիւրի մէջ, ամեն կողմ կեղտ, ապակաշտութիւն, անամբողջութիւնները քաղաքի մէջ աճողին առուների պէս են նոսրում: Ի հարկէ, այդպիսի դժբախտութեան մատնված քաղաքը չէ կարող երբեք մտածել քաղաքային տարրական դպրոցներ հիմնելու մա-

ւոր զինուորներ, որոնք հպատակութիւն կը յայտնեն յեղափոխական գործին, կը թօթափեն իրենց վրային զինուորական uniforme-ը, ձերմակ սաւառի (փաթիլին) կը փաթիլեն զրուսներն և կը միանան պատամուրներուն: Եւ մէջի նորընտիր կուսակալ, Հիլմի-Պէ՛՛՛ Սահան գնաց բարեկարգիչ յանձնաժողովին հետ, հոն կարողացուց իր հրովարտանք, հաղորդեց կայսերական բարեներք, խոստացաւ ամեն շնորհ ու վարձատրութիւն սուլթանի կողմէ անոնց՝ որ կը հնազանդեն սուլթանի կառավարութեան, բայց այս ամենն ոչինչ է: Միւս կողմանէ՛՛ սոսկալի սուլ կը տրեք Եւ մէջի մէջ, և այս առթիւ սուլթանն ու նախարարաց ժողովը մեծ մտահոգութեան մէջ են և որոշած են մեծ քանակութեամբ ալիւր գնել և անյապաղ հասցուցնել ի Եւ մէջի:

Կրօնի թէ ալպանիացիք Քաղաւոր-Կայսեր՝ Չարի խորհրդով դադրած են առ այժմ իրենց շարժումներէն՝ թէպէտ ևւրտական թերթերն ասոր բողոքովին հակառակ կը պնդեն:

Թուրքիոյ զանազան տաղանդի ահեղ է, մինչև իսկ չէ կարող ընդհիմ (հետևել) զօրքերն յղել Արաբիոյ կողմերը... ուր թողունք Գերմանիոյ կայսեր ընդունելութեան համար բացված միջոցնաւոր ծախքերն... ուսկից պիտի հողացուին... Հրամաններ, սաստիկ հրամաններ միշտ կարձակվին, բայց դրամ... ուր է դրամ:

Դիտուել է՝ թէ անդիլական նաւատորմիդի սպաններուն թիւն աւհամեմատ կերպով շատցեր է, անգլապապէս, Կրօնէի ջուրերուն մէջ. Բ. Գուրը բացատրութիւններ կը պահանջէ և Պարսիկ, Լեռնոն, Ս. Պետերբուրգի ղեսպան:

սին, չէ կարող մտածել չքաւոր ազգաբնակչութեան բժշկական ձրի օգնութիւն հասցնելու և այլ հարկեր ու մի անհրաժեշտ բաների մասին: Նա կատարելապէս թշուառ է, անօդահանութիւն աւել որ կուտուրական երկրներում հասարակութիւնը՝ հաւաքական համեմաշխութեան չնորհիւ՝ միաբան մաքառում է անընդաւարտ հանգամանքների դէմ, չը նայելով դժուարութեան, գոհերին: Եթէ մի գիւղ, մի աւան կարողանում է միահամուռ ջանքերով ձահիճներ չորացնել, ջրանցքներ չինել, կանոնաւորել գետի ընթացքը, վերջապէս ամեն միջոցով բուռն կուռ մղել ընտելեան դէմ՝ իր երջանկութիւնը նրա ձեռքից զօտով զղելու համար, արեւօք ցաւալի և յուսահատական չէք գտնում, որ մի մեծ քաղաք այդքան գիտակցութիւն, այդքան հասարակական բնազդ չունի՝ իր զարհուրելի փողոցները, իր թշուառ դրութեան դէմ տարիների ընթացքում, քայլ առ քայլ, հաստատ կերպով մաքառելու համար... Եւ այդ բոլորը ինչից է առաջանում: Զը կան մարդիկ, չը կայ մասսայի կրթութիւն, չը կայ հասարակական ուր և է իրելալ...

Լ.

ԲԵՄԱԽՆԻՐՈՒԹԻՒՆԸ ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԶԷ

Տեղական ինքնավարութեան մարմինները՝ ինչպէս օրինակ քաղաքային դոման և ուղարկւան, գեմատիօի ժողովները և վարչութիւնները շատ անգամ ստիպված են լինում սահմանափակել իրանց գործողութիւնը, որովհետեւ նախանշական ատենները դժուարութիւններ և արգելքներ են առաջ բերում, առարկելով, թէ տիրող օրէնքը թոյլ չէ տալիս ինքնավարական մարմիններին յայտնի նեղ սահմանից դուրս գալ: Թէ ինչ տեսակ են լինում այդ առարկութիւնները և ինչ ծայրահեղութեան է հասնում ձեռնարկութիւնը՝ այդ ցոյց են տալիս մի շարք դէպքեր: Անհ նրանցից մէկը, ամենաթաքմը, որ հասաւ կառավարական սենատի ընտելեան: Տեղի նախագի զեմտովն, աչքի առաջ ունենալով այն մեծ ծառայութիւնները, որ արեւ է հանդուցեալ բժիշկ Լիտվինով, որոշել էր նրա պատկերը կախել քաղաքային բուժարանում՝ իրեն յարգանք նրա յիշատակին: Այդպիսի մի անմեղ որոշում, յարգանքի այդպէս մի համեստ նշան, հաւանութիւն չը գտաւ նախանշական ատենի կողմից: Վերջինս առարկեց, որ օրէնքի մէջ ցոյցումներ չը կան այդպիսի դէպքերի համար և որ կայացած որոշման մէջ չէ պարզված, թէ ինչ դրամական աղբիւրներից պէտք է հայթայթվի պատկերի ծախսը: Եւ այդ հիման վրա նախանշական ատենը մերժեց ինքնավարութեան որոշումը: Ինքնավարութիւնն այն ժամանակ դիմեց կառավարական սենատին, խնդրելով այդ բարձր ատենանից՝ հեղինակաւոր բացատրութիւն: Սենատը ընտելով դործը, պարզելով օրէնքի իմաստը, գտաւ, որ նախանշական ատենը սխալվել է և այդ պատճառով նրա վճիռը պէտք է բեկանվի: Սենատը յայտնեց, որ ինքնավարական հիմ-

ներուն միջոցաւ բողոք բարձր է այդ դահիճներուն մօտ, ի մասին ու է կարգադրութեան Կրօնէի վերաբերմամբ: Գերմանիա և Աւստրիա քաղաք են ասպարէզելը:

Թըքական հորիզոնին վրա նոր ամպ մ'ալ:

Գիտէք արդէն որ Թուրքիոյ և Յունաստանի հայտնութեան գաշնադիրն՝ որ մայրաքաղաքին մէջ ստորագրուեցաւ, կը պարտնակել իր մէջ շատ մը խնդիրներ, որ տակաւին իրենց լուծումը չեն ստացած:

Գիտ խնդիրներէն մին՝ օսմանեան պետութեան երկրներուն մէջ հաստատված հեղինակաւորութեան modus vivendi-ն է, որ նորոգ կարգադրութիւն մը պիտի ստանայ ղեսպանական համաձայնութեամբ: Մինչև հիմա այդ մասին եղած գոմարտմաներ երկու կողմէն, անկարող եղան գտնել հիմնական բան մը, որ երկուստեք ընդունելի լինի: Բ. Կրան նպատակն է ձիւղ իր հպատակներուն պէս վարուիլ հեղինակաւորութեան հետ, իսկ հեղինակաւորութիւնը կը պնդէ դաշնագրութեան պայմաններուն վրայ:

Կրտսի թէ պ. Զախմի մտադրել է մեծ պետութեանց միջնորդութիւնը խնդրել օսմանեան պետութեան տնայ յամառութեան առաջին առնելու համար: Կարելի է յուսալ որ մեծ պետութիւնները պիտի ընեն այդ միջնորդութիւնն ի նպատակ Յունաստանի և թէ թուրք կառավարութիւնը պիտի համակերպվին... Հիմնական Թուրքիոյ մէջ գտնուող հեղինակաւորները ձիւղ սեղապայիններուն պէս են, և իբրեւ օսմանեան հպատակ կը նկատվին:

Նարկուլիճներն ամենին արդելված չէ յարգանքի մի այնպիսի ձև սահմանել, ինչպէս է պատկեր կախելը, նրա համար անհրաժեշտ ծախսերն ամենին նոր տեսակ բան չեն: Նախանշական միշտ կարող է տեղեկանալ այն աղբիւրներն մասին, որոնցից վերցվում է ծախսի գումարը:

Անշուշտ դարմանալի է, որ մի այնպիսի չինչին գործ կարող է մերժումներ հանդիպել, և ինքնավարական հիմնարկութեան մի անմեղ, ամենահասարակ որոշում արգելք է հանդիպում: Բայց դա բնորոշ է, իբրեւ սովորական երևոյթ, իբրեւ հասարակական գործունէութեան վրա ունեցած հայեացքների արտայայտութիւն: Բժանդարութեան ոգին, մերժելու, արգելելու տրամադրութիւնը օրինակաւորութեան է համարվում: Սենատը, որ օրինակաւորութեան բարձրագոյն թաղամանն է և հսկողը, առաջին անգամ չէ, որ յայտնում է թէ օրէնքի իմաստը պէտք է ըմբռնել խելացի կերպով և աւելորդ բժանդարութիւններ չը ստեղծել:

ՆԱՄԱԿ ԳԻԼԻՃԱՆԻՑ

Յուլիսի 22-ին

Գիլիճանը սակաւահող է: Մի քանի տարի առաջ մի պրօէկտ էր կազմված և ներկայացրած կառավարութեան հաստատութեան, որպէս զի Գիլիճանի անտառային չըլանում գտնված թաղանթները (подстилки) իբրեւ «նաւել» հողեր բաժանութիւն Գիլիճանցիներին, սակայն մինչև այժմ այդ գործը մասին ոչ մի տեղեկութիւն չը կայ և գիւղացիները մեծ նեղութեան մէջ են՝ չունենալով բաւարար հող արտերի և խոտահարքի համար: Զը նայելով որ այդ թաղանթները դեռ չեն հաստատված գիլիճանցիների վրա, բայց և այնպէս իրանք օգտվում էին այդ թաղանթից՝ խոտ քաղելով և արտեր վարելով, և դրա համար որոշված տուրք են վճարում անտառային վարչութեան: Սակայն 2—3 տարուց ի վեր կարգադրված է, որ այդ թաղանթներից օգտվեն ոչ թէ գիւղացիները այլ ամեն մի անտառային պահպան, կամ գիւղացիների ընդամէնը՝ աւելի (общественно) ինքը օգտվի իր պահպանութեանը երկրորդված անտառում գտնվող թաղանթներից, վճարելով նոյն տուրքը, ինչ որ առաջ գիւղացիներն էին վճարում: Դառնալով մի տեսակ սեփականութիւն արեւելիների համար, այդ թաղանթը ոչ թէ միայն բաւականութիւն են տալիս նրանց պահանջներին, այլ և շահագործութեան աղբիւր են դառնում և հարստահարութեան մի նոր ձև՝ գիւղացիների նկատմամբ: Արեւելիները, օգտվելով իրենց տուրքից, 3—5 և աւելի անգամ թանգ գնով են վաճառում իրանց իրաւունքները թաղանթներից օգտվելու նկատմամբ... Հասկանալի է ուրեմն, թէ որքան ծանր պէտք է լինի գիւղացու համար, օրինակ՝ 15 րուբլի օրինական տուրքի փոխարէն 50 րուբլի վճարել արեւելիին, մի կամ մի քանի թաղանթների համար... Այս հանգամանքն էր, որ ստիպեց Գիլիճանի հայ հասարակութեան

Բողաբախում հրատարակու մի լրագրի 38 համարում հրատարակված տեսանք «Ատառահական թղթակիցի» մը մէկ համարը՝ մայրաքաղաքէն ուղղեալ՝ յունիս 15 թականով: Սույ թղթակիցը Տատեանի վրա խօսելով կըսէ «Շարժում» խմբագրութեան.— «Ձեր դաւանանքը շատ մեծ է փաշային վրայ. ես նոյնքան լաւատես չեմ—համամիտ եմք իրեն, մենք ալ իրեն պէս լաւատես չեմք, ոչ թէ միայն Տատեան Յարութիւն փաշային, այլ այն ամեն անձն նրկատմամբ, որ պաշտօնեայ է թուրք կառավարութեան՝ կուզէ փաշա լինի, կուզէ էֆէնդի, թէ հայ լինի և թէ թուրք: Նոյնպէս մենք ալ դիտեմք որ՝ «ամեն անգամ, երբ ազգին վերաբերեալ կենսական խնդիր մը վարչութեան սեղանին վրայ է, հոն, ներկայ է նաև վեմ, ատենագիտը...»

Բայց չի կրցնել հասկնալ թղթակցին հետեւեալ տողերը: «Ան էր որ (Տատեան) դարձեալ Իզմիրեանի հրամարմանը նպատակ և նա էր որ տարի մը առաջ արքունի ազատելու խոտուածով հրաւեր կարգաց նախորդ պատերազմին (Իզմիրեանի)՝ «մեղադարձ» նման խնդրագիր մը ներկայացնել սուլթանին: Փաշան չէր մտաբերած թէ իր դիմացը երկաթէ եկեղեցական մը կայ, որ ատանկ ծուղակի մէջ չինար և նախամեծար կը սեպէ չընդունել կառավարութեան կողմէ նշանակուած ամսականը...»

Այս պարբերութեան մէջ որքան տող՝ այնքան ալ հակասութիւն կայ: Լրագրի պատահական թղթակցին ո՞վ որ է, կերելի թէ լաւ հասկացած չէ, որ Իզմիրեան սրբազան՝ արդարեւ «երկաթէ եկեղեցական» է, բայց չէ այն դերա-

մի գրաւով խնդրեք կազմել և օգտվելով անտառային ղեկարգումներով դերեկտօր պ. Նիկիտինի ներկայութիւնից—հերկայացնել նրան, իր լրագրներին միջոցով, յուլիսի 20-ին: Պ. դերեկտօրը կարգաց խնդրերը և ապա գիւղացիների հետ խօսակցութեան մէջ մտնելով յայտնեց, որ այդ հարցն արդէն վերջացած է և եկող տարի կը գան գլխաւոր հողաշահներ, կը չափեն այդ հողերը և կը յանձնեն զիլիճանցիներին և խորհուրդ տուեց գիւղացիներին աւելորդ ծախսեր չանել այդ առիթով, որովհետեւ հարցն արդէն լուծված է:

Ինչպէս յայտնի է, անտառային նոր օրէնքով, միջին և աղքատ գիւղական դասակարգերը զրկվում են իրանց համեստ պահանջների համար փայտեղէն—մասալայի «բիւն» առնելու հնարաւորութիւնից, որովհետեւ նոր օրէնքի տրամադրութեամբ՝ միանգամից 20 գերանից պակաս չէ կարելի բաց թողել անտառից, այն ևս աճուրդով, իսկ աճուրդով իր հարուստ հարեանի կամ փայտեղէնի կապալանէի հետ մրցելու կարողութիւնից զուրկ է աղքատ, նոյն իսկ միջին կարողութեան տէր գիւղացին: Այսպիսով գիւղական մասսան զուրկ է մնում անտառի բարեկեցիկ և նրանց դառնում են հարուստների սեփականութիւն: Գիւղական ներկայացուցիչ Յ. Ուշիխանեան այս հանգամանքն էլ բերանացի բացատրեց պ. դերեկտօրին. համակրութիւն զբոսաւ պ. Ուշիխանեանի այն միտքը, որով խնդրում էր մի անտառային տեղ յատկացնել գիւղացիներին, որտեղից կարողանային իրանց մանր-մուրս պահանջների համար փայտ կտրել՝ նախօրօք վճարելով և թոյլտուութիւն ստանալով անտառապետից, առանց «օր օր ալ չի կնքել» երեսը տեսնելու: Պ. դերեկտօրը համաձայնվեց այդ մտքի հետ և խոստացաւ մտածելու և իրանից կախվածն անելու՝ գիւղական ազգաբնակչութիւններին այդ նեղ կացութիւնից ազատելու համար:

Մի խնդիր էլ մալական հասարակութիւնը ներկայացրեց, որով խնդրում էր փայտեղէնի գններն իջնելու, պատճառաբանելով, որ իրանց փայտագործները վնասվում են և թէլ այնպէս չարունակվի, իրանց կը վերացնեն իրանց տախտակի գործարանները: Պ. դերեկտօրը անտեղի գտաւ փայտի գները էժանացնելու միտքը, իսկ թէ ինչ հետեանք կուենեալ մալականների խնդիրը երկրորդ կետը, որով խնդրում էին դառնալանութիւն գները հեռու—գոտուր տեղերից և մօտիկ—յարմար տեղերից ստացվող փայտեղէնի գների մէջ չը գիտները,—թէ հայերի և թէ մալականների ներկայացրած խնդիրները դերեկտօրը իր հետ վերցրեց:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԿՐՈՒԹԵԱՆ

Տաղանթօք, յուլիսի 21-ին

Սրանից 8—9 տարի առաջ հայ առաջադիմական կուսակցութեան պարագլուխ և ղեկավար Կրիստօր Սրբունիս, մի անգամ «Մշակ» թղթակցիներին մասին խօսք բացված ժամանակ, ի միջի այլոց ասաց՝ «Ամենքն էլ քահանայական ու եկեղեցական խնդիրների մասին են գրում,

բեկ թափու երկաթներէն, որ անմիջապէս բեկանի և Տատեանի «նպատակով» հրամարման լինի իր պատրիարքական աթոռէն: Եթէ Իզմիրեան չընդունել Տատեանի հրաւերը՝ սուլթանին «մեղադարձ» մը ներկայացնելու համար, ինչպէս կարելի է համոզուել, որ մի և նոյն Իզմիրեանը՝ մի և նոյն երկաթէ մարդը, հրաժարած լինի պատրիարքութեան՝ Տատեանի նպատակով. փաշա անձերու ծուղակը լաւագոյնս ճանչցող պատրիարք մը, ինչպէս կարելի է որ այնպիսի դերաշահան լինի, որ խաբուի փաշան չէն՝ և անոր ծուղակին ինչպիսի երեւոյթներով իր իրենք արտաբան... Այս հակասութիւնն հարկ է որ այդ պատահական թղթակցին ուղղէ, ապա թէ ոչ սխալ է իր ստացած տեղեկութիւնը:

Ինչպէս արտասահմանի ուրիշ լրագրի մը մէջ անցեալներն հրատարակած նամաթիւնակ նաւակի մը առթիւ գրեցինք, նոյնը կը կրկնեք և հիմա. պիտի գայ այն երջանիկ ժամանակն՝ որ ոչ թէ վերջիլեալ թղթակցին թերթագրութեան պէս, այլ լուսոյ նման ի յայտ պիտի գան ճշգրտաբանութիւնները, բայց մենք հիմա այնպիսի միայն բռնեք և փակեք սոյն միջանկեալ թղթակցութիւնը.—Տատեան Յարութիւն՝ Օրմանեանի և անոր նամաներուն վրա միայն կրնայ տալ բաժնի իր ազդեցութիւնն ու նպատաւորութիւնն, իսկ Իզմիրեանի նման երկաթի մարդուն ըրով կը փրեն ամեն intrigue-ներ, ուսկից ալ որ ծագեն և ինչ միջոցով թելադրուին... Ամեն բանի մէջ ստոյգը և ճշմարտութեան, այս է հաւատարմութիւնը թղթակցի մը պաշտօնը:

Գիւրուկ

կարծէր թէ հայոց կեանքում էլ ուրիշ և աւելի
կարեւոր խնդիրներ չը կան։ Այդ 8-9 տարի
առաջ էր։ Իսկ այսօր «Մշակի» ամբողջ առա-
ջադրական կուսակցութիւնը ոտքի է կանգնել
ու մի գլուխ այդ նոյն հոգեւորականութեան խնդրի
մասին պայքար է մղում «Մշակի» մէջ։ Ինչպէս է
պատահել, «Մշակը» ուր և հոգեւորականութեան
խնդիրն ուր, առաջադրական կուսակցութիւնը
նոր և արխիւ-պահպանողական կղերքն ուր։ Սա
ինչ աշխատութիւն է ուրեմն։ Ինչո՞ւ բացա-
րաբէր այս տարօրինակ երեւոյթն է։ Ահա թէ ին-
չով։ Սրանից մի քանի տարի առաջ մեր առա-
ջադրական կուսակցութիւնը, ղեկավարելով
մի քանի սխալ հաշիւներով և մոտաւարով այն
հիմնական վիճը, որ բաժանում է իրան հոգե-
ւորական դասակարգից, իր ամբողջ ուժերով մի
յայտնի ընտրողական պայքարի մէջ մտաւ...
Առաջին անգամից առաջադրական կուսակցու-
թիւնը յաղթութիւնը տարած համարեց, նա ըս-
կան էր տեսել այդ յաղթութիւնը. բայց քիչ
ժամանակ անցած, նա նկատեց, որ ինքը սաս-
տիկ խաբւել է իր հաշիւների մէջ, որ ինքը...
«բազում աշխատեցաւ և ոչինչ կալաւ»... Գրան, որ
հարկէ, յաջորդեց դառն հիասթափութիւն, իսկ
այդ հիասթափութիւնից յետոյ, փոխանակ
զգաստանալու, փոխանակ զգալու իր առաջին
սխալն ու անհիմն հաշիւները, այդ կուսակցու-
թիւնը նոր սխալների մէջ է ընկնում և աշխա-
տում է անպատճառ նուաճել հոգեւորականու-
թիւնն ու եկեղեցին... Արդե՞հետեւ մենք այդ
հիասթափութիւնից չենք, և երբեք հոգեւորակա-
նութիւնից լաւ բան չենք անկալել, ուստի
մեծ զարմանքով ենք հետևում «Մշակի» մէջ այդ
առիթով եղած բանախօսին և յիշատի, հարց-
նում ենք՝ առաջադրական կուսակցութիւնն ա-
ւելի տարածաբար արդի վարկից, թէ պահպանու-
ղական կուսակցութիւնը, որի avant-garde-ն է
կարծում արխիւ-պահպանողական հոգեւորակա-
նութիւնը։ Միթէ՞ հայ առաջադրականները
մտածում են ամբողջ մարդկութեան պատմու-
թեան մէջ մի չը տեսնված դրոշմ կատարել. ո՞վ
է տեսել, որ կղերք առաջադրական դեր կա-
տարէ մի որ և է այդի բարդակրթութեան
գործի մէջ։ Ուրեմն «Մշակի» կուսակցութեան
կողմից մի մարտութիւն չէ յայտնու ապագայ
դէմ մի այնպիսի դասակարգի վրա, որը, ինչ
էլ լինի, չէ կարող ամենաթիւնը պահպանողա-
կան տարր լինելուց դադարել։

Այսօր ամեն կողմից գնահատներ են թափում
տղեկ ճանաչանքի դէմ և յորդորներ են կար-
գում, որ ինտելիգենտ մարդիկ հոգեւորականներ
դառնան։ Բայց միթէ հայկական տղեկ հոգե-
ւորականները միայն այսօր են նկատելի։ Միթէ
սրանից մի 10 տարի առաջ դրանց թիւն աւելի
բիշ էր։ Ինչու առաջներում այդպէս սխտանա-
տիկաբար յարձակումներ չէին անում և ինչ
են ուղիւս անել «ինտելիգենտ» բառով։ Սրանից
մեր դրական-պահպանողականների յայտնի երա-
մակ ինտելիգենտներ են, թէ ոչ։ Սապէս
խնդրում ենք, այդ ինտելիգենտ արխիւ-պահպա-
նողականները երամանի է աւելի վառ հասց-
նում հայ ժողովրդին, թէ այն անուս գիւղական
քանանները, որոնց դէմ այդպիսի խիստ կեր-
պով բողոքներ ենք լսում այսօր։ Բայց գուցէ
ինտելիգենտ ասելով, առաջադրական կուսակ-
ցութեան պատկանողներին են ակնարկում։
Նպատակը։ «Մարքի» մեր եկեղեցին, — ասում
են, — տղեկ և ամառան (կարգի պահպանողա-
կան) հոգեւորականներից և ասպարէզ բանալ
արժանաւորների (կարգի առաջադրականների)
համար։ Ուրիշ խոսքով, կամենում են, եթէ
կարելի է այդպէս ասել, առաջադրական կա-
նային եւ մեր հոգեւորականութիւնը, այսինքն,
արեւմտական եղանակով, այնպէս բարեփոխել
նրան, որ նա մի օր յանձնար հայ ժողովրդի ա-
ռաջադրական avant-garde-ը կազմէ։ Այս է
իսկական նպատակը, այնպէս չէ։ Բայց միթէ
կարծում են այդպէս դատողները, թէ հոգե-
ւորականութիւնը կարող է երբ և իցէ կամ որ և
իցէ միջոցով դադարել պահպանողական տարր
լինելուց։ Զը պէտք է մոտենալ, որ հոգեւորա-
կանութիւնը մի առանձին դասակարգ է կազ-
մում, որը ունի իր ընդհանուր դասակարգային
աշխարհայեցողութիւնը, իր դասակարգային
շահերը (և ոչ թէ առանձնաշահեր) և, ինչպէս
պատշաճ, կրկնում է պ. Յ. Ս. «Մշակի» № 121-ի
մէջ), իր աւանդութիւններն ու միջավայրը։ Հե-
տապէս նրան կերպարանաւորելու ջանքերը
ցնորք կարող են համարվել։ Մինչև անգամ կա-
րելի է երկու կողմ, որ նոյն իսկ այդպէս բա-
րեփոխված հոգեւորականութիւնը երկայնի սուր
կը դառնայ... Արդե՞հետեւ մենք, չը պէտք է մոտե-
նալ, որ հոգեւորական դասակարգը իր ամբողջ
էութեամբ միշտ պահպանողական տարր եղած
է ու այդպէս էլ կը լինի։ Եւ մի քանի առաջա-
դրականներ, արհեստական եղանակով, այդ
դասակարգի միջավայրի մէջ ընկնելով, շատ
հեշտութեամբ կը տալին, կոմպրոմիսների մէջ
կը մտնեն ու մի երկու տարի անցած, նոյն
պահպանողականները կը դառնան, ինչ որ էին
նրանց նախորդները։

Սրբ որ ասում են՝ «Թողե՛ք մեռելներին իրենց
մեռելները թաղելու», այդ չէ նշանակում, թէ
այդպէս է որ մենք այսօրվանից փակենք մեր ե-
կեղեցու դռները և ճամբարներ մեր հոգեւորակա-
ններին։ Հանգիստ կայե՛ք, պ. Յ. Ս., մեր և ձեր
ցանկութիւնով եկեղեցու դռները չեն կարող
փակվել, միայն թէ հասարակական ասպարէզը
մարքելու համար, փոխանակ ձեր սաների ու
զինելու կամվարկայի մէջ սեղանի, յորդորե-
ցէ՛ք, որ նրանք հրապարակ դուրս գան չէնց
այնպէս, ինչպէս որ կան և իրանց եռանդուն
ու շիտակ գործունէութեամբ հասարակական

գործերի ասպարէզից դուրս վանեն հոգեւորա-
կաններին ու ամեն կերպ աշխատեն նրանց փա-
կել եկեղեցական պարիսպների մէջ, ինչպէս ա-
նում են քաղաքակրթ երկիրներն առաջադրակա-
նաները...

Բոլորովին սխալ է այն միտքը, թէ մեր ժո-
ղովրդը մի առանձին կայք սէր և համակրու-
թիւն ունի դէպի փարապետները. նա շատ լաւ
գիտէ չարք բարիքը փոխելը։ Մամբը վարդա-
պետների պատմվելը նրան պակաս ուրախու-
թիւն չը պատճառեց, քան Մամբըների կղերք
աշխարհականների պատմվելը։ Մէկին սիրելու
և նրա ետևից երթալու համար հայ ժողովրդը
անձուէր գործունէութիւն է պահանջում, կուզէ
այդ մէկը հոգեւորական լինի, թէ աշխարհական։
Բայց քանի որ — ասում ենք — հոգեւորական դա-
սակարգը, իրեն մի պահպանողական տարր, չէ
կարող շիտակ ուղիով առաջ գնալ ու միշտ
առաջ գնալ, ուստի շատ մեծ սխալ է առա-
ջադրական կուսակցութեան կողմից ջանքեր
անել այդ դասակարգի հետ խառնելը, նրան
ոչ ուղի ու նրա գործունէութեան ասպարէզին
էլ աւելի լայնացնել։ Արդե՞հետեւ ենք, սրանից մի
քանի տարի առաջ այդ կուսակցութեան արած
հաշիւները միանգամայն անհիմն ու սխալ էին,
և փոխանակ ուղի սխալ ուղիներ դիտարու-
թեամբ, նոր սխալ հաշիւների մէջ մտնելու,
անհրաժեշտ է զգաստանալ, յիշել այն անպի-
վիճը, որ բաժանում է նրան հոգեւորական դա-
սակարգից։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Զաքարյալ, յուլիսի 21-ին

Խնդրում եմ մի անկիւն ջնդե՛ք «Մշակի» մէջ
այս երկտողին։ Անցեալ 1897 թ. ղեկավարե-
ր ամսին եւ ուղարկել էի Բագուի հայոց թատրո-
նական կոմիտէին Օստրովկով «ВЕСЬ ВИНН
ВИНОВАТЫ» պիւէսի թարգմանութիւնը — Ան-
մեղ մեղաւորների վերնագրով։ Անցնում է մօտ
մի ամիս և ես ստանում եմ զերօրան Արդիւյից
աֆիշա, որի վրա կարմանքով կարդում եմ.
«Անմեղ յանցաւորն եր», թարգմանութիւն
Առաջնային։ Ես անմիջապէս նախկին դիմում
եմ պարտին, և յայտնելով իմ ջնդարակութիւ-
նը նրա սիրովը վարմունքի համար, ինչպէս
եմ յայտնել կոմիտէին իմ բողոքը թարգմանու-
թեան վերնագրի աղաւաղման համար, առաջ
բերելով այն մի քանի կէտերը, որոնց հիման
վրա «ВЕСЬ ВИНН ВИНОВАТЫ» — «Անմեղ մեղա-
ւորներն են» հարկաւոր գտել թարգմանելու։
Բայց անցնում է էլի մի ամիս և ես կրկին պա-
տի եմ ունենում մի և նոյն անձից ստանալ
աֆիշա մի և նոյն վերնագրով։ Դերասանական
խումբն այնուհետեւ Բագուից տեղափոխվում է
Թիֆլիս և այդտեղ խաղում է թարգմանութիւնս
մի և նոյն աղաւաղած վերնագրով։ «Մշակին»
այդ անգամ նկատողութիւն է անում փոխանակ
«Անմեղ մեղաւորներն են» — «Անմեղ յանցաւորներն են»
թարգմանութիւն համար։ Այժմ վերոյիշեալ խումբը
ցրված գաւառներում՝ թարգմանութիւնս խա-
ղալիս, չը գիտեմ ինչ յամառութեամբ, կրկին
նոյն վերնագիրն է պահպանում։ Տեսնելով
մեր յարգելի դերասանների այդ անուղղելի
վարմունքը, ես, երկար սպասելուց յետոյ,
այժմ իմ պարտք եմ համարում հրապա-
րակորէի խնդրել նրանցից, որ այսուհետեւ այդ
պիւսի կողմի աղաւաղման չեն թաքեն իմ
թարգմանութեան վերնագիրը։ Ո՞վ գիտէ, ինչ
յեղափոխութիւն կատարած կը լինեն նրանք
ամբողջ թարգմանութեան մէջ, երբ այդպէս
բացարձակ ու անխնայ, հակառակ թարգմանչի
ցանկութեան և մամուլի նկատողութեան, փո-
փոխում են վերնագիրը, որ իսկոյն աչքի է ընկ-
նում։ Թատրոնական ղեկընդնորները, խօսելով
դերասանների խաղի, պիւսի յատկութիւնների
մասին, աւելորդ չեն համարում մարակել եր-
բեմն և թարգմանիչներին։ Իսկ ո՞վ է արդեօք
մեղաւորը...

Գ. Առաւման

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՆ

Վրաստանի Էկզարխ Փալիան արքեպիսկո-
պոսը, ցանկանալով վերանորոգել Սցիւթի վրաց
նշանաւոր տաճարը, այս օրերս հրաւեր կար-
դաց բոլոր ուղղափառներին՝ աշակցել այդ գոր-
ծում, յայտնելով, որ տաճարի վերանորոգու-
թեան համար հարկաւոր է 200,000 ռուբլի։
Մեծ իշխան Ալեքսանդր Միխայլովիչ, կարգա-
րով լրագրիները մէջ այդ հրաւերը՝ ուղարկել է
Էկզարխին հետեւեալ հեռագրով. «Կին և ես
հաճութեամբ նուիրում ենք 2000 ռուբլի Սցիւթ-
թի տաճարի՝ Կովկասում ունեցած մեր ամենա-
հին սրբութեան՝ վերանորոգութեան համար»։

Պրապաւում տեղի ունեցած սլավոնական հան-
դէսներից յետոյ մի նոր հանդէս տեղի ու-
նեցաւ Կրակովում լեհ գրող Միլոշևիչի արձանի
բացման առիթով։ Պատահմամբ այդ հանդէսին
ներկայ եղաւ Մովսիսի համալսարանի պրոֆէ-
սոր Բրանդ, որի արտասանած մի ճառը մեծ
գովտութիւն է յարուցել թէ լեհերի և թէ ու-
սաց հասարակութեան լաւագոյն մասը մէջ։
Այդ տոնամիջոցութեան ժամանակ յայտնի իրա-
ւաբան Սպասովիչ, որ նոյնպէս ներկայ էր հան-
դէսին իրեն լեհերի ներկայացուցիչ, ողջունեց
Բրանդին, իրեն ուսուի։ Մովսիսի պրոֆէսոր,
իրեն պատասխան, արտասանեց մի անուակտ

ճառ, որ և առիթ է տուել արդար գովտու-
թիւնների նրա դէմ։ Ամենից առաջ նա հարկա-
ւոր համարեց բողոքովին անտեղի կերպով յայտ-
նել լեհերին, որ ինքը լաւ հայեմասէր է և
Կայսրի հաւատարմ Նպատակը։ Ապա շարու-
նակեց. «Ես այնքան յետադիմական եմ, որ
չեմ հաւատում պարամենտականութեան։ Միթէ
պատմութեան հաստատութիւնները արգելեցին
Անդրկասի ստիպել չինացիներին թոնաւորվել
Սպիտմուս, միթէ նրանք արգելեցին այս օրերս
Միացեալ-Նահանգներին մարդասիրութեան պատ-
րակով՝ մարդասիրան պատերազմ սկսել և
աւաղակային ձեռք մեկնել դէպի «Անտիլեան»
Մարգարիտը։ Ես զայրանում եմ, որ որոշում-
ներ կայացնելիս մի քանի վատ դիտարկութեան
տէր մարդիկ ձայների մեծամասնութեամբ կա-
րդանում են անպատշաճ ղեկավարող ան-
հատների ազդիւն ձգտումները։ Ես հաճութեամբ
կրկնում եմ Նիլդէրի խօսքերը, թէ «ձայններ
պէտք է կշռել և ոչ թէ հաշուել»։ Ինչ բան է
մեծամասնութիւնը, — յիմարութիւն, խելքը միշտ
քնքի բաժինն է։ Անկողնիների մէջ գտնվե-
ցան մարդիկ, որոնք չվկայեցին հոգեւորին։ Այդ
հանգամանքն առիթ է տուել ուսուսաց մամուլի
յայտնի տեսակի օրգաններին յարձակվել լեհերի
վրա, ասելով թէ նրանք չը կրեն «հիւրասիրու-
թեան կանոնները։ Լեհերը կարող էին, ի հարկէ,
և չը չվկայեցին պարծենկոտ պրոֆէսորին, բայց,
ինչպէս ճիշդ նկատում է ուսուսաց մի լրագիր,
միանգամայն անտեղի էր Բրանդի յիշատակու-
թիւնը իր հայեմասիրութեան և հաւատարմ
հպատակութեան մասին։ «Ինչ է մտածում պ.
Բրանդ, ասում է լրագիրը, մնացած ուսուսերի
մասին. ուս տեղ է դնում նա իր համարարա-
նական ընկերներին։ Կամ գուցէ այդ ակնարկ է,
թէ լեհերը — վատ հայեմասէրներ են և ոչ հա-
ւատարմ հպատակներ։ Պէտք է խոստովանել,
սակայն, որ լեհական մամուլը մեծ հասունու-
թիւն ցույց տուեց այդ խնդրում. նրա մեծա-
մասնութիւնը խիստ կերպով դատաւարեց
չվկայեցողներին և «այնպիսի առողջ մտքեր յայտ-
նեց, որ միայն կարելի է ուրախանալ», ասում
է «Русская Мысль» ամսագիրը։ Ռուս պրոֆէսո-
րի շօլիխտ և պատաւական հայեացքները
միայն ժպիտ առաջ բերին լեհաց և ուսուսաց
խնդիրներին հասարակութեան մէջ։

Մինչև այժմ ընթացական դպրոցներում կանոն
կար, որ վեցերորդ դասարանը վերջացող աշա-
կերտն իրաւունք ունի լրացուցիչ և օթ եր օր
դասարան մտնել միայն այն ժամանակ, երբ
սովորած առարկաների համար նրա ստացած
թուանշանները 31/2 բարձր են։ Այժմ ժողովր-
դական ուսուսողութեան մինիստրութիւնը յայտ-
նում է, որ պարտաւորեցուցիչ չէ 31/2 թուան-
շանը և ցանկացողները կարող են մտնել եօթ-
ներորդ դասարան այն ընդհանուր կանոններով,
ինչպէս փոխվում են դասարանից դասարան։

Երէկ ստացանք «Русская Мысль» ամսագրի
յուլիսի համարը, որի ներքին տեսութեան բաժ-
նում կարդում ենք. «Տարօրինակ դեր է խա-
ղում ոչ անպար բանաստեղծ պ. Վելիչկո, իր-
ն «Кавказ» լրագրի խմբագիր։ Անդրկովկասում
անցեալ տարի սաստիկ անբերրութիւն կար.
այդ մասին խօսելու Կովկասի Կիւլառնոտեսա-
կան ընկերութեան և նրա օրգան «Кавказское
Сельское Хозяйство» լրագրի մէջ, խօսեց և «Новое
Обозрение» լրագրի, բայց «Кавказ» լրագիրը
խիստ և կոպիտ կերպով հերքեց կարելի մեծու-
թիւնը, յայտնելով որ նա շատ անշնչան է, տես-
նելով աղէտին օգնելու մեծահոգի փորձերի մէջ
հայկական ինտրիգներ...»։ Ապա ամսագիրը
առաջ բերելով երաշխութեան վերաբերեալ
փաստերը, աւելցնում է. «Առաւարտութեան
պաշտօնը Կովկասում շատ բարդ է և ուսուսական
գործին ոչ բարի ծառայութիւն են մատուցա-
նում «Кавказ»-ի նման լրագիրները»։

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդեցին մի
լուր, որ անցաւ գաւառական մամուլի էջերը,
իսկ այժմ հերքվում է պաշտօնապէս, իրեն ան-
հիմն։ Լուրը վերաբերում էր այն հարցին, թէ
նմ աղէտը է յանձնել անառաւաններ իրանդու-
թիւնների դէմ մարտաւելու հոգը՝ ներքին գոր-
ծերի մինիստրութեան, թէ երկրագործութեան
մինիստրութեան։ Այդ գործը մինչև այժմ ներքին
գործերի մինիստրութեան հսկողութեան տակ է։
Շատերն առաջարկում են, որ այդ գործը յան-
ձնի երկրագործութեան մինիստրութեան՝ իրեն
գիւղատնտեսական և անասնապահութեան վրա
հսկող հիմնարկութեան։ Սակայն ներքին գոր-
ծերի մինիստրութիւնն անկարելի է գտնում
այժմ այդ քաղաք անել, որովհետեւ անասունների
հիւանդութիւնների դէմ կովկաս միջոցները
պահանջում են մեծ չիտմաների մէջ լինել ժո-

ղովրդի հետ և պարունակում են ստիպողական
կարգադրութիւններ, որոնց իրադրոյթը համար
աւելի ոյժ ունի ներքին գործերի մինիստրու-
թիւնը, քան թէ երկրագործութեան մինիստրու-
թիւնը։

«Кавказ» լրագիրը հաղորդում է, որ դիտա-
ւորութիւն կայ մի քանի փոփոխութիւնների են-
թարկել Կովկասում գործող բարեգործական ըն-
կերութիւնների կանոնադրութիւնները։ Որքան
ճիշդ է պաշտօնական լրագրի այդ տեղեկու-
թիւնը, երաշխաւորել չենք կարող։

Թիֆլիսում շարունակվում է հով եղանակ, և
ամենին նման չէ յուլիսի սովորական շոր օ-
րերին։

ՎԱՂԱՐՇԱՊՈՏԻՑ մեղ գրում են. «Յուլիսի
21-ին ժողովրդական դպրոցների վերատեսուչը
ներկայութեամբ ուղարկ Ստոտաւածին եկեղեցու
երէցփոխի, նախկին ծխական դպրոցի հողա-
բարձութեան և դիւղական ստարալիսայի ցուցա-
կագրեց երկսեռ դպրոցների շարժական ու
անշարժ բոլոր կալքը և գուքը, պարտաւորա-
ցնելով մի և նոյն ժամանակ երէցփոխին տա-
րեկան 600 ռ. մոցնել զանաւարան ի նպաստ
նոր բացվելի ուսուսաց տարրական դպրոցի»։

ՇՈՒՇՈՒՑ մեղ գրում են. «Այստեղ ամեն ա-
մառ ընդհանուր սովորութիւն է դարձել՝ քաղա-
քից դուրս Նովոնիերում, աղբւրների կողքին,
անտառներում քէ ֆեր սարերը, ուրախութիւն
ներ անել և այլն։ Տեղացի թուրքերը եւ գուրկ
չեն մնում այդ տեսակ զուարճութիւններից։ Սա-
կայն վերջինները, ըստ աւանդական սովորու-
թեան, ըէֆ են դնում ոտից մինչև գլուխ սպա-
նակված և իրանց ըէֆերը համեմուն են ան-
տեղի հրացանաձգութիւններով, սրերի մրցու-
թիւններով և այլն։ Եւ ի հարկէ, այդ վայրերի
զուարճութիւններն էլ առանց դժբախտութիւն-
ների չեն մնում։ Պատահում է շատ անգամ, որ
մահմեդականները ըէֆերում տեղի են ունենում
գոտութիւններ, և ահա ամեն մէկը իր հրա-
ցանն ու սուրն առած՝ յարձակվում են իրար
վրա և հետեւանքն այն է լինում, որ ըէֆը վեր-
ջանում է մէկ կամ մի քանի սպանութիւննե-
րով։ Այդպիսի դէպքեր շատ են պատահել ան-
ցեալ տարիներում, նոյնը կրկնվում է և այս
տարին»։

ՔԱՐՎԱՆՍԱՐԱՍԻՑ մեղ գրում են. «Յուլիսի
24-ին մեր նահանգի դպրոցների տեսուչ պ. Ես-
կիմով տեղական արխիւստի հետ կիւս և առա-
մեր գիւղի երկսեռ ծխական դպրոցի շինութիւնը
և գուքը, որպէս արդէն առել է Իրիշանի,
Պոդոբելիսի և այլ գիւղերի ծխական դպրոց-
ները»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ՆԱՄԱԿ ԱՍԵՐԻԿԱՍԻՑ

Բոստօն, յուլիսի 19-ին

Սանթ-Նագոի գրաւումէն վեր լրագրաց ե-
ռանդը չափով մը պակտի է, պատերազմին շա-
հականութիւնը կարծես նուազել է, իբր թէ ար-
դէն ամեն ինչ լրացած է. Սպանիաց պարտու-
թիւնը կատարում իրողութիւն մը կը նկա-
տուի։ Սակայն այսօր ալ Փորթօ-Վիլյոյի արշա-
ւումն սկսել է խանդավառել հասարակութիւնը։
Զօրավար Մայլը Սանթ-Նագոի տներին հա-
նակին մեծագոյն մասին հետ Սան-Փուանի մօ-
տերը ցամաք պիտի ելնէ և կղզին գրաւէ։ Բաղ-
դատաբար շատ դիւրին դրոժ է այս, երբ նկա-
տի առնուի, թէ ինչքան նուազել է սպանիացի
զինուորին բարոյական ոյժը։ Վհատութիւնը տի-
րիք է ամեն սրտի, չը կայ մէկը, որ չը դիտնայ
թէ պատերազմը պարագայ տեղը կը շարունակուի։
Մեծ խելացութիւն պիտի լինէր Սակասթայի
համար այժմէն խաղաղութեան համար բանակ-
ցել։ Ամերիկացուց ոգևորութիւնն ալ նոյն և ա-
ւելի խոշոր համեմատութեամբ աւելցել է. եւն-
քներն անպարտելի կը նկատուին և ամերի-
կեան նաւատորմը անմասն մահաւանդ երբ
անդիական գովեստներն ալ կը հանեն, ամե-
րիկացուն հպարտութիւնը չափ ու սահման չու-
նի։ Փորթօ-Վիլյոյի արշաւանքին համար պիտի
գործածուին Սանթ-Նագոյի սպանիացի զինուոր-
ներէն առնուած ընտիր հրացանները, ամերի-
կացիք կարմիրով կը խոտորվանեն թէ իրենց
հրաղէնները բաղդատաբար շատ ուրոյն տեսակէն
են. իրենց զինուորները ստիպուած էին շատ տեղ
յառաջանալ ինչնամայն կրակին տակ, մինչև որ
կարենային իրենց հրացանները գործածել։ Այս
անհասարակ դէպքերու շնորհիւ շատ կեանքեր
զոհուեցան Սանթ-Նագոյի շուրջը, այսօր ուրախ

Типографія Грузинск. Издат. Т—ва, Лорисъ-Мелик. ул. № 13